

նակութիւնը, ուրիշ ընդհանրապէս կը տուժն ազգային հաստատութիւններն:

Արդ, ո՞վ է մեզու որը, ժողովակար թէ մուրաբի:

Այսպէս շատ անգամներ ժողովակար, հակառակ խզի եւ ազնուութեան, ազգային ամենէն նուիրական շահերը կը զոհեն իրենց անձնական կրքին անխոստովանելի միջոցներով: Այս պարագային մէջ կարծեմ սխալ դատաւան մ'ըրած չեմ ըլլար, եթէ ըսենք թէ ժողովակարներէն շատ ու շատ աւելի մեղաւոր է նոյն խակ զինքը ընտրող ժողովուրդը:

Եթէ կայ ցաւալի կէտ մը այն է, որ զէթ անցեալ տխուր գէպերն, որչափ ալ թարմ եւ ազնուաբեր, բարերար ազդեցութիւն չեն ընէր ընտրող ժողովուրդին վրայ: Ասոր ազդեցոյց շատ քաղաքներ, որոնք մեծամեծ զոհողութիւններով երբ կը յաջողին հրաժարեցնել իրենց առաջնորդները, նոր ընտրութեան մը կը ձեռնարկեն, չեն ջանար օգտուել նախորդ սխալներէն եւ շատ ապարտելի անտարբերութեան մը մէջ կը թաղուին, կը մնան եւ այն ատեն միայն կենդանութեան նշան ցոյց կուտան, իրք իրենց անտարակելի անհոգութենէն գործուած զեղծութիւններու համար կոտիլ, վիճել եւ զիրար բռնաբար պէտք ըլլայ:

Արդ ժողովուրդը երբ իր քուէն կուտայ այդ օրը պարտի լրջախոն եւ չըջանալեաց ըլլալ. նախապէս պարտի լաւ մը խորհիլ իր ընելիք ընտրութեան վրայ: Եթէ այդ օր իր իրաւունքը չի կրնար օգտակար կերպով ի կիր արկանել կը դառնայ ինքը խաղալի մը անձնական դժուած հաշիւներու եւ կիրքերու: Այլ եւս ինք իր ձեռքով յանձնած տապալին միտաբեր հարուածներուն դէմ բողոքելը, չըսենք յիմարական, գէթ անխմտ եւ անտեղի է: Պէտք է օրինակ անենք այն ամեն ազգերէն, որոնք սահմանադրապէս կը կառավարուին Այդ ազգերու շատեր ընտրութեանց ատեն կ'սկսին եռանդեամբ գործիլ յօգուտ իրենց ընտրելին. մարդ երբ ակնհաստ ըլլայ անոնց ընտրողական գործողութեանց, պիտի տեսնէ որք ամեն մարդ թողած իր անձնական զբաղումը միայն կը շահազրկուի ընտրութեան կարեւոր գործով: Վասն զի այն կենսական ու վճարական վայրկեանն է, ուր իրենց ազգին կամ երկրին ղեկը պիտի յանձնեն իրենց հաւան ընտրելին:

Մեր ազգի մէջ հանդէպ պաշտօնական մարմնոց եղած դժգոհութիւններուն սկզբնապատճառը եւ պատասխանատունն նոյն ինքն ժողովուրդն է. քանի որ իր ձեռքով, իր քուէով վարչական գործը կը յանձնէ ընդհանրապէս անպարտաճանաչ ու անազնիւ մարդոց ձեռքը, ո՞վ գիտէ ինչ հաշիւներով: Այս կէտի վրայ ուշադրութիւն հրաւիրելու թիւղաբերն զիս այս օրեր տեղի ունենալիք քանի մը ընտրութիւններն մեր ունեցած բարեխաղտակ ընկերութեանց համար կը յուսամ թէ իմովանն զոյգն ծառայութիւն մը մատուցած կը լինիմ ազնիւ ազգայնոց մասնանիշ ընելով մեր վէրքերուն միակ պատճառը իրենց ողջ մտութեան յանձնարարելով:

Ամէն բանէ առաջ պէտք է լաւ ըմբռնենք, որ մեզմէ ընտրելի անձր ունենայ իրմէ պահանջուած յատկութիւններն եւ վայելէ հանրային վստահութիւն, միով բանիւ ունենայ պարտաճանաչութիւն եւ գիտակցութիւն իւր պաշտօնին:

Երբ ընտրողք ճանչնան իրենց ընտրելեաց արժանիքը եւ ընտրուողք ալ գիտնան իրենց պարտքերն, այլ եւս տեղի չ'մնար ըսելու, ո՞վ է մեղաւորը:

Քանի որ ընտրութեանց վրայ էր մեր խօսքը, պատեն ստիժ սեպելով կ'ուզենք երկու խօսք ալ ընել կիլիկիոյ կաթողիկոսութեան համար, որոյ նոր ընտրութիւնը կատարուելու համար մասնաւոր իրաւահանուած է: Օրինաւորապէս կատարուած ընտրութիւն մը յանձին Ալէքսանդր Սրբազանի ջնջելով Օրմանեան Պատրիարքի չնորհիւ առ այս ընտրելի նշանակուած են երբեմն Եգիպտոսի առաջնորդ եւ վերջերս Ազգիանուպոլսոյ առաջնորդ տիրահոյակ Մեսրոպ Սուքիասեանը. կարծենք թէ անօգուտ չ'զրտի ըլլալ եթէ Արեւալոյսի Պատ. ինքազրութիւնը յանձն առնէ ծանօթացնել ժողովրդեան այդ մարդու անցեալը հարկ եղած տեղերէն քաղելով անոր կենսագրական ծանօթութիւններն:

ՄԵՂԱՒՈՐ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մոզաքրաւ սեղական արար օրաթերթը իր 23 օգոստոս թուականու, Գա. հիւրէի հայ ժողովրդեան Ազգ. Առաջնորդարանի մատուցած 400 ստորագրութեամբ հանրագրին խօսքը ընելէ վերջ, ստորագրութեանց մասին կը յայտնէ այն կարծիքները, որոնք հրատարակուած էին մեր նախորդ թուով, Ազգ. Առաջնորդարանէ մեզ զրկուած պաշտօնական յայտարարութեան մէջ:

Ամէն պարագայի մէջ սակայն, չենք ուղեր հաւատալ թէ Մոզաքրաւի մէջ «կը լսենք» ով սկսուած այդ լուրը ուղղակի Ազգ. Առաջնորդարանի Գիււհաւան կողմէ հաղորդուած ըլլայ:

— Չորեքշաբթի օրէն սկսեալ մինչեւ այսօր 23է աւելի նամակներ հասած են իւրմբազրութեանս, Ազգային Առաջնորդարանի պաշտօնական յայտարարութեան իմաստը հերքող պարունակութիւններով եւ խընդրուած անոնց հրատարակութիւնը:

Մենք, որովհետեւ Արշաղոյսի բոլոր սիւնակները չենք կարող նուիրել այդ նամակներու հրատարակութեան համար, ուստի այս անգամ, յանուն մեզ զրկուած նամակներու հեղինակներուն, որոնց մէջ կը գըտնուին հանրագիրը ստորագրող պատուաւոր եւ ծանօթ անձնաւորութիւններ, Պատ. Ժողովին ուշադրութեանը յանձնել հարկ գատեցինք:

Հայ կաթողիկոսներու նորընտիր Պատրիարքը Պօղոս Եպիսկ. Կեսարիոյ, առանց սպասելու իր ընտրութիւնը վաւերացնող կայսերական իրաւէին, պատրիարքական գահը բազմած եւ ձեռնարկած է իւր պաշտօնին: Այս փութկոտութիւնը մեծ ցրտութիւն առաջ բերած է պալատին մէջ եւ մամուլին հրաման արուած, որ հրաժարին Պատրիարքին անունը յիշելէ: Բ. Գուռը յայտարարած է թէ Պապին հաւանութիւնը բաւական չէ վաւերական համարուելու համար Պատրիարքի ընտրութիւնը:

Հայ Բանտարկեալները արձակելու համար Սուլթանին կողմէն Պատրիարքին տըրուած խոստումներուն գործադրութեան նախապատրաստութիւնները կը սեմնուին: Պոլիս Հայոց ձեռքազրկութիւնները ոչ միայն անընդհատ շարունակութեամբ առաջ կը տարուին, այլ եւ կը բազմապատկուին: Սուլթանին գահակալութեան տարն դարձը մօտ է, 19/31 օգոստոս, այդ օրը հաւանական է որ Սուլթանը իր խոստումը կատարէ, ապէ անկէ ժողովուած եւ մէկ ամսուան մէջ բանտ նետուած խեղճերը արձակել տալով անդին Մուրասները, Արթանեանները շրջթաներու մէջ կը փտտին, ու եկեղեցականները իրենց աքտորափայլերը կը տառապին ծանր հիւանդութեամբ:

(Մարտ)

Ա Ձ Դ

Գալատեան վարժարանի արձակուողքը կը լլանան եւ վարժարանի վերաբացումը տեղի կ'ունենայ յառաջիկայ երեքշաբթի 29 Օգոստոս:

Յ. Սեթեմէն
Տնօրէն Գալատ. վարժ.ի

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՐԴԻ ԿԵԱՆՔԷ

120 երեւներէ բաղկացած այս գրքոյկը կը պարունակէ Պերճի (Մ. Տամառեան) հայրենասիրական ստանաւորները:

ԳիճԳ Ե 5 լրու. օ ողջ

Կը գտնուի խմբագրութեանս քով:

Հ Ր Ա Ի Ի Ր Ա Գ Ի Ր

Լուարան-Բնթերցատան Ընկ. Ընդհ. Ժողովոյ Բ. նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակէ 27 Օգոստոս քաղաքիս Ս. Եկեղեցւոյ շրջափակի Մանկապարտէզը, կէս օրէ վերջ ժամը 2 1/2 ին:

Կը հրաւիրուին բոլոր անգամք ներկայ գտնուիլ սոյն կարեւոր նստի, նոյնպէս անդամակցիլ փափաքող յառաջդիմասէր ազգայինք:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. Ընթերցումն եւ վաւերացումն նախորդ նստի ստեղծագրութեան.
- Բ. Ընտրութիւն Մայր Դիւանի.
- Գ. Ընտրութիւն Գործադիր Ժողովոյ.
- Դ. Ընթերցումն եւ վաւերացումն ներքին կանոնադրի.
- 21 Օգոստոս 1899 Առժամայ նախագահ Գահիրէ

Օտար երկիրներու մեր բաժանորդներն, իրենց բաժնեգիրը կրնան մեզ հասցնել «Մանտա-փոսթ» ով մը ուղղեալ առ:

E. TOROSSIAN

DIRECTEUR-RÉDACTEUR DU JOURNAL "ARCHA LOUIGE," LE CAIRE (Egypte)

Ազգ. քաղաքիոյ համար գործակալի մը պէտք ունինք, ստանձնել ուղղորդներն կը խնդրուի գրաւորապէս գիտել Արեւալոյսի խմբագրութեանս: Լրագրաց Խմբագրութիւններէն կը խնդրուի փոխանակել իրենց թիւթերն:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

ԳԱՀԻՐԷ, Վ. Պ. Ե Յ. — Չեր յառաջդիմասէր զգացումները հրապարակելու շատ պատճառներ ունիմ, որովհետեւ իր նոր երիտասարդ մը կըրնար օրինակ ըլլալ շատ մը այնպիսիներու, որոնք կ'ուզեն իրենց գործերը մուծի մէջ թողուլ եւ լրագրութեան ծածուկ թշնամիներ են անուղղակի միջոցներով:

ԳԱՀԻՐԷ, Ն. Մ. Ա. — Չեր յանձնարարութեան համաձայն Տիար Փ. Հ. յայտնեց մեզ թէ կը մերժէք ձեր թիւթը Տրք թիւէն սկսեալ: Յայտնի է թէ Արեւալոյսը ժողովուրդին իրաւունքները պաշտպանելու համար է որ ձեր ընդունելութեան չ'արժանանար, սակայն պէտք է գիտնալ թէ մենք ժողովուրդին իրաւանց պաշտպանութիւնը անհատի մը բաժանորդագրիւնէն շատ բարձր կը նկատենք:

Դեւ ուրիշ բան գիտէք . . . :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանիա եւ Ամերիկա. — Քանի մ'օրեր յառաջ, Ամերիկայի խորհրդարանի անդամներէն Մըսթըր ձօրձ էտմիտ Փօս, ի Գիլէ ընդունուեցաւ Գերմանիոյ կայսեր կողմէ՝ որոնց տեսակցութիւնը տեւեց երեք քառօրյ ժամու չափ: Վիլհէլմ կայսրը յոյս յայտնեց թէ Ամերիկայի եւ Գերմանիոյ յարաբերութիւնները միշտ բարեկամական պիտի մնան: Ապա ակնարկելով Գերմանիոյ եւ Ամերիկայի նաւատորմի ուժին յաւելումը, ըսաւ. « յառաջագոյն գերմանական բանակն

էր՝ որ գլխաւոր նեցուկն եղաւ եւրոպական խաղաղութեան. բայց ազգաց ապագան կախում ունի Ովկիանոսէն, և հոն իւրաքանչիւր պետութիւն պէտք է շնայ ըստ բաւականին զօրաւոր լինել իւր շահերը ըստ արժանոյն պաշտպանելու համար: Գերմանական նաւատորմի ուժին յաւելումը երբէ՛ք սպառնալիք չ'նշանակիր ո՛ր և է պետութեան դէմ, բանդի ազգ մը որ քան զօրաւոր լինի ծովու վրայ, այնքան ալ ուրիշները պիտի վարանին թշնամութիւններ սկսելէ. ուստի նաւային զօրութեան յաւելումը իրապէս խաղաղութեան լաւագոյն վեհաժողովն է»:

—Հոնկ-Քոնկէն օգոստոս 13 թուականաւ կը հեռագրուի Տէյքի Նիդի թէ, Բանդանի մէջ յուսահատ կռիւ մը տեղի ունեցած է 300 Չինացի զօրքերու և 1000 հոգիէ բաղկացեալ հրոսարմբի մը միջև, որոնք յաղթող հանդիտանալով չըջակայ գիւղերուն մէջ պարզած են իրենց դրօշակը:

Չինացի զօրքերէն 250 մեռած և 100 վիրաւորեալներ կան:

Քանդանէն 2000 զօրք եւս ճամբայ հանուած է կռուոյ վայրն երթալու համար:

—Տէյքի Նիդի Պէռլինի թղթակիցը կը ծանուցանէ թէ՛ Վիլհէլմ կայսրը շատ կը շահագրգռուի յունական բանակին վերակազմութեան խնդրով: Յունաստանի թագաւորին Քիէլ այցելած միջոցին, կայսրը ըսած է անոր. «Իուք պէտք է բանակ մը վերակազմէք, արժանի ձեր փառաւոր երկրին անուան, և առ այս աճապարել հարկ է, ապա թէ ոչ երկիրը վտանգի մէջ պիտի ըլլայ: Կը սիրեմ ձեր երկիրը և այս իսկ էր պատճառն, որ կը խրատէի զՅունաստան պատերազմի չ'մղուիլ: Հիմա միևնոյն պատճառաւ նոյն խրատը կուտամ ձեզ, կարելի եղածին չափ շատով վերակազմելու զօրաւոր բանակ մը»:

—Տրէյֆիւսի փաստարան Պ. Լապորի կենաց դէմ եղած սպանութեան փորձին համար, զնդապետը ցաւակցական երկար նամակ մը ուղղեց անոր ընկրով. «Կը յուսամ թէ երբ էս վերջապէս ազատիմ և դու աղէկնաս ու զօրանաս, այն ատեն ամենամեծ ուրախութիւնը պիտի ունենամ գրկելու այն մարդը, որ ճշմարտութեան թշնամիներէն կը նկատուի իբր իրենց ամենախելաքիմ հակառակորդը»:

—Տէյքի Նիդի Պէռլինի թղթակցին ըսածին նայելով Օգոստոսի վերջերը Չարն ու Չարուհին պիտի մեկնին Ռուսիայէն, երբ քամիի չափ արտասահմանի մէջ անցընելու համար:

Իրենց առաջին այցելութեան վայրը պիտի ըլլայ Քորէնհակ, անտի Անգլիա պիտի մեկնին և ապա ի Հէս, ուր քանի մը շարժումներ պիտի մնան, և կը յուսան թէ հոն պիտի դարմանուի Չարին սրտի հիւանդութիւնը, որով բաւական ատենէ կը տառապի:

—Սուրբանը աներկեան դեսպանիմ ևն. —Պոլսոյ աներկեան դեսպանը Մովակալ Տուէյը կը հրաւիրէ ի պատիւ անոր մեծ հանդէսներ կազմակերպելու համար և այս մասին արտօնութիւն կը խնդրէ Սուլ-

թանէն: Վերջինս՝ շատ մը վարանումներէ վերջ կը մերժէ Մովակալ Տուէյին իր նաւով Տարտանէլը անցնելու հրամանը, դաշինքները պատրուակելով:

Գեսպանը ցոյց տրուած պատճառները թէ և անհիմն կը գտնէ, սակայն Սուլթանը կը պատասխանէ թէ Մովակալ Տուէյին համար առաջադրուած ի Պոլիս այցելութիւնը պիտի վիրաւորէ Սպանիոյ անձնասիրութիւնը, որուն հետ լաւ յարաբերութիւններ ունեցած է միշտ Օսմ: կառավարութիւնը:

Ամերիկեան դեսպանը թէ և փորձած է համոզել զՏուէյ Մովակալն որ Պոլիս գայ, սակայն նա բացարձակապէս մերժած է առանց իր նաւուն Պոլիս երթալը:

—Կ. Պոլսէն կը հեռագրուի Կազեք Տրուսիմօրթին թէ, անցեալ արբաթ Սուլթանը ունկնդրութեան ընդունած է նախ Եէյսի-Էլիսամը և ապա Ֆրանսական դեսպան Պ. Գոնսթանը:

Ունկնդրութեանէն վերջ Ֆրանսական դեսպանը կ'երթայ Եէյսի-Էլիսամի ապարանքը և ժամու մը չափ կը տեսակցի անոր հետ:

Առաջին անգամն է որ օտար տէրութեան դեսպան մը Եէյսի-Էլիսամին այցելութիւն կուտայ:

Պոլսոյ Տպագրական տեսչութիւնը սակայն, թուրք թերթերուն արդիւած է այս միջադէպը յիշելու:

—Սուլթանը, Եպարքոս Խալիլ Ռիֆաթ փաշայի ամսաթոշակը 2000 ոսկիի բարձրացունելէ զատ, նոր ապարանքի մը շինութեան համար ալ 12,000 ոսկիի նուէր մը ըրած է:

—Կ. Պոլսոյ Ռիլթերի գործակալութեանէն արուած հեռագրի մը նայելով, Սուլթանը ազգու բողոք մը զրկած է ի Լոնտոն Անգլո-Իտալիական պայմանագրութեան դէմ, որը Թուրքիայի Ափրիկեան Տրիպոլսոյ վրայ ունեցած իրաւանց բռնաբարում մը կը նկատէ:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ա Ն Դ Ո Ի Ռ Ս Ե Ն Ե Ա Կ Ը

Հէրաթներու մէջ, մեր մամիկներէն ըսած էինք նկարագրութիւնը եօթը ծովերու մէջ կանգնած անդուռ պալատներուն, որոնց մէջ հուրի աղջիկներ զեռի կամ վիշապի մը ձեռքով բանուած՝ անձկալի կը սպասէին այն կարիճին, որ պիտի գար իր ոսկիէ գորգով խորտակելու իրենց վրայէն հիւսուած զուռը: Բայց սա մեր գիտցած ու ընտանած քաղաքներուն մէջ անդուռ սենեակ մը Աղեքսանդրիա միայն տեսնել վերապահուած է եղեր. սենեակ մը, որուն մէջ սակայն հուրիի փոխարէն հավակա մը բանտարկած է...՝ Ինքզինքը: Արձակուրդի զուարճալիք մը չի կարծէք, իրողութիւն մը: Է և թարմ իրողութիւն մը:

Քանի մը երիտասարդներու ջանքերով տարիէ մը ի վեր հոս կազմուած էր ժողովրդական Գրադարան-Բնակարան մը, որ սակայն նիւթական միջոցներու սակաւութեան պատճառով մասնաւոր սենեակի մը մէջ մնացած՝ հանրութեան յաճախումին յարմար վիճակի մէջ չէր: Հիմնադիրները ստիպուած ըլլալով այս օրերս հեռանալ քաղաքէս, արդէն սկսուած այսքան օգտակար գործ մը քայքայումէ փրկելու դիտարկութեամբ խորհեցան ընդհանուր հանգանակութիւն մը ընել և Գրադարան-Բնակարանը հրապարակի վրայ

տեղ մը փոխադրելով՝ անոր օգտակարութեան սահմանն ընդարձակել և յարատեւութիւնն ալ ապահովել: Այս նպատակով հանգանակիչները կ'ուզեն դիմել նաև հավակալի մը, որ հեռագրական պաշտօնեայ է և միանգամայն Բարեգործական Ընկերութեան ատենագետ: Հեռագրատուն մտնելով պաշտօնեաներուն իր սենեակը կը հարցնեն. ծառայ մը կ'առաջնորդէ զիրենք փողոցի վրայ նայող պատուհանի մը առջեւ, որու ներքը նստած էր հավակալն Սովորական բարեւը փոխանակելէն ետքը:

—Ներեցէ՛ք, կ'ուզէինք վայրկեան մը տեսնուիլ ձեզի հետ:

—Իուք ո՞վ էք և ի՞նչ կ'ուզէք:

—Սնդրենք, անյարմոր է փողոցէն խօսիլ, զուրը ցոյց տուէք, հինգ վայրկեանի համար:

—Իուրը գոց է. ինչ որ պիտի ըսէք ատկէ ըսէք:

Երիտասարդները տեսնելով որ անկարելի պիտի ըլլայ զուրը գտնել, կը ստիպուին պատուհանէն յայտնել իրենց դիմումին նպատակը: Ասոր վրայ հավակալն կարմրած ու չփոթած.

—Ես ատանկ բաներու չեմ խառնուիր. ժամանակ չունիմ, շատ զբաղուած եմ:

—Բայց, ներողութիւն, ժամանակի խնդիր չի կայ հոս . . .

—Հա՛, աղէկ, բայց չեմ կրնար . . . չեմ կրնար . . . չեմ կրնար . . . ժամանակ չունիմ:

Հանգանակութիւնը յաջողութեամբ կը շարունակուի, աւարտումն ետքը արգիւնքը կը հաղորդենք ձեզ: Իսկ այս հավակալին միջադէպը իր պարզած նորօրինակ քաղաքավարութեամբ հանդերձ սա օգուտը ունեցաւ որ Արեւալայի ընթերցողներուն յատկանշանական զուարճալիք մը հայթայից մեր Հայ-Լայպի կեանքէն:

13)25 Օգոստոս 1899 ԱՌԱՆՁԱՐ Աղեքսանդրիա

ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Գեղեցիկ մարմին մը կազմելու համար. — Պէտք է Բտալացիին աչերը, Անգլիացիին գլուխը, Գերմանացիին ձեռքերը, Ֆրանսացիին մէջքը, Սպանիացիին ոտքերը:

Լեզուները. — Գեղեցիկի մը հետ ամուսնութիւնը յաջողցնելու համար սիրոյ յայտարարութիւնները ընելու ես իտալերէն, զգացումները նրկարգրելու ես ֆրանսերէն, շարադանցութիւնները ցուցնելու ես հելլեներէն, սէրը ապահովելու ես սպաներէն, ամուսնութեան հրաւիրելու ես գերմաներէն, ամուսնական պայմանագրութիւնները կնքելու ես անգլիերէն լեզուներով:

Նրգեր. — Սպանիացիին երգը լաց մ'է, իտալացիինը՝ աղաղակ մը, գերմանացիինը՝ կռիւ. հունգարացիինը՝ գոռ ու գոչ, ֆրանսացիինը՝ պար, զուրցերացիինը՝ քնոյ մէջ խոկոց:

Այր ամուսինք. — Գերմանիոյ մէջ տէր են, Անգլիոյ մէջ սպասաւոր, Ֆրանսայի մէջ անհոգ ընկեր, Իտալիոյ մէջ բանտապահ, Սպանիոյ մէջ պլիւս փորձանք:

Ամուսնանալու երիտասարդներէն. — Ֆրանսայի մէջ հեշտասիրութեան, Անգլիոյ հարստութեան, Գերմանիոյ զօրութեան, Սպանիոյ գեղեցիկութեան, Իտալիոյ համբերութեան և Յունաստանի արեցողութեան աստիճանները կը հարցուին:

Երկիրներու յարմարութիւնները. — Մարդիկ Գերմանիոյ մէջ ուղեւորութիւն, Իտալիոյ մէջ՝ ընակութիւն, Ֆրանսայի մէջ՝ զբօսանք ու զուարճութիւն և Անգլիոյ՝ խորին մտածող ըլլալու են:

Կենցաղի յարմարաւոր երկիրներ. — Ծնէ՛ ի տալիս որ գեղեցիկ կլիմայ ունի, ապրէ՛ Ֆրանսա, ուր մեղմի միջոցները ճոխ են. մտի՛ր Սպանիա՝ ուր տխրութիւնը և սուգը տիրապետած են:

Կանանց կեանքը Ֆրանսայի մէջ. — Ֆրանսացի կինը ընդհանրապէս երեք արարուածով կատակերգութեան կը նմանի. ստալիներ՝ նազանքի եւ հեշտասիրութեան հակամիտութիւն. երկրորդը՝ ազատ վարմունք և հաճոյակատարութիւն, երրորդը՝ խոր տխրութիւն և ջերմուսանց կրօնասիրութիւն:

Ս. Գ.

ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ի Գ Ա Ն Ի Ր Է

ԵՐԵՎԱՆԻ ԲԱԾՆԱԲԱԾ

ՄԱՆՁԵՐՈՒ, ԱՂՋԱՆՅ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՋԻ

Մանչերու գպրոցը կը գտնուի Անգղիացոց վարժարանի շէնքին մէջ ի Պապ-էլ-Խալիք:

Աղջկանց եւ Մանկապարտիզի համար զատ տուն մը յատկացուած է, որ կը գտնուի ի Հօշ-էլ-Շարգավի, Տավուտիչէ:

Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի աւանդուին Հայերէն, Անգլիերէն, Ֆրանսերէն եւ Արաբերէն լեզուները:

Մանաւոր հոգածութեամբ ուժ պիտի տրուի Անգլիերէնի:

Մանկապարտիզի համար պատրաստ է մասնագէտ եւ փորձառու վարժուհի մը եւ մանկապարտիզի վերջին մէթոտներով ու գրութեամբ պիտի կրթէ մանուկները:

Վարժարաններու բացումը անդի պիտի ունենայ առաջիկայ Սեպտեմբեր կին:

Մանրամասնութեանց համար դիմել, Տիար Հաճի Փիլիպպոս Եղուպեանի ի Մէնչիչէ:

2-15

ՕՏԻԱՂՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱՏՈՅ

Երկաթուղու վաղոցներէն միոյն մեջ կը գրանուէին քահանայ մը եւ ձկնորս մը:

Այս վերջինը սուկայի կերպով արքած, հայհոյանքի հեղեղ մը կը թափէր այս ու այն կողմ, ուրիշ . . . թափքիւններու հետ:

—Տղա՛ս, խելէ՞ք գլուխ ժողուէ, կ'ըսէ քահանայը, եթէ ասանկ հայհոյես, ուղղակի դժոխք պիտի երբաս:

—Ուրեմ հոգն է, կը պատասխանէ ձկնորսը, տո՛ւսակց գնալ գարու առած եմ:



Օրիորդ մը կ'ըսէր Աղեփանդը Տիւմա որդւոյն. —Գիտցե՛ք, պարո՛ն. թէ բարոյականին ինչ բլլալը գիտե՛մ:

—Հա՛րկաւ, օրիորդ, կը պատասխանէ կ'ըսող Բարեկամ գրքին հեղինակը, ինչպէս որ գողերն ալ գիտեն արդարութեան ինչ բլլալը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂՋԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ

Տայիբի Սանիթի Եփես գիմնազիում

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, սրանց, կանանց եւ տղայոց համար:

Գինքըը չափաւոր եւ աժան:

Փորձ մը միայն կը բաւէ: 1-24

ԱՍԻԱԿԱՆ ՀԱՅԻ ՓՈՒՌ

Շնորհ Մուհամեճ Ալի, Վիքորիա դեղարանի դեմ Մանասիր փողոց թիւ 25

Մ. թորոսեան, Կ. Բարունակեան եւ Բնկ. կը յայտարարեն թէ, իրենց նոր բացած փուլին մէջ կը պատրաստուի անխարդախ ալիւրէ ափական թոնրի հաց եւ Լաւաւ:

Մարտողութիւնը անպայման կերպով դերացընող Ասիական այս պատրաստութիւնը շատ մը փախկանաճաշակներու գոհունակութեան արժանացած է:

Անվիճելի կերպով միակը եւ անմրցելի:

ՃԱՇԱԿԵՑԷՔ ԵՒ ՏԵՍԷՔ

3-8

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅՆԵՐՈՒ

Ս Ե Ս Ս Ե Տ Ե Ս Ս

Ս. Ե. Ս. Սեֆուլիի վանատեսան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատուն մէջ կը գտնուի պատի եւ քծնօրի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանդաւոր, ոսկի, արծաթ եւ ճիւղի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանք ամենաընտիր տեսակներէն զարդեղէններ, շերտներ, օդեր, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ

6-50

ՏՕՐՔՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ապսին, Շարհ Գուպրի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ախաններ:

Կը դադարեցնէ վայրկեանապէս ակուպի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխատորէ:

8-10

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵՑԷՔ

Օգառուն եւ յարմարաւոր տեղ մը լաւ կահաւորեալ սրճարան մը կայ, որոյ տէրը մեկնման պատճառաւ կ'ուզէ ծախել:

Հաստատուն գործ մը ունենալ փափաքողներն, թող դիմեն Արաբոյսի խմբագրատունը, հարկ եղած մանրամասնութիւններուն տեղեկանալու համար:

3-3

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի Գ Ա Ն Ի Ր Է

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ ապագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահադղեր, Հրաշխագրեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիրքեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Բնկերութեանց եւ վաճառականներու սպազրակաւ ամեն պիտոյցներ:

Իւր սպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց չնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտագնութեան եւ գներու չափաւորութեան մէջ:

Եզրպատուի ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք եւ փութով կը կատարուին:

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պապար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Մուղէյիէն փոխադրած է ի Պապար Մուրուր Թրանսական նորածեութեանց յար եւ նրման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբ մինչեւ ցարդ գոհ ըրած է իրեն դիմող Պատ. յաճախորդներն:

Իւր դործածած ապրանքներու տոկունութիւնն երբէք տարակոյս չ'վերցնելու:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո'չ միայն չափաւոր գներով, այլ եւ փութով եւ մեծ խնամով կը պատրաստուին:

Գրմեցէք, կիթ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ եւ կոշտերէ (նաորը) աղատ մնալ:

4-24

Հ Ա Ջ Ա Տ Ե Ա Ն

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բաստըզ) սեւ, չազանակազոյն եւ ոսկեզոյն: Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող: Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխատորեալ է:

Հ Ր Ա Շ Ա Լ Ի Զ ՈՒ Ր Մ Ը

Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 դրշող (2 ֆրանք):

Ճերմկցնող շուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզրպատուի մէջ միակը:

Ակուայի փոշի եւ շուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց դիտու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փութանակենք բոլոր սզգաց գործածած նամակազրոյցները:

4-8